ազգի մատուռնի կայր, բայց մերն մեծագոյն
90 քան զամէնն: Եւ ասին թէ Ծնունդն Տրդատ է
չինել. իսկ սուրբ Յարութիւնն՝ Կոստանդիա-
նոս: Եւ քաղաքացիքն ամէն հոռոմ են եւ աղ-
քատ, վանից ծառայ գոլով, նա եւ աղթարմա
են եղել, այս է Փափին դարի: Եւ այլ բազում
95 ուխտատեղք տեսաք. եւ դարձաք ի վանքն
սուրբ Յակոբ:

Եւ այլ օրն գնացաք Յովհաննու յանա-
պատն ի լեառնակողմն. եւ տեսաք զբնակու-
թիւն Իթ ամաց. եւ Տունն Զաքարիայի եւ
100 Վէմն որ ընկալաւ զմանուկն. եւ ամէն եկեղե-
ցիքն քարէ է. բայց ժամ չասի. ո՛չ քահանայ
ունի. զի քաղքէն հեռու է եւ արպնոց: Եւ այլ
բազում եւ զանազան յոլով իրս տեսաք. զի ի
Տնօրինականաց իմասցիս լիակատար:

ԱՂԵՐՍՈՒ ՖՈՒԱՆԿԱՑ ԵՒ ՀԱՅՈՑ

105 Եւ Ֆռանկք մեծ սէր եւ դաշն ունին ընդ
Հայս. զի տարին իրեք անգամ նոքա գան Սուրբ
Յակոբ պատարագեն. եւ առաջնորդն մեծ
խրախութիւն եւ ընթրիս առնէ նոցա. որ Ծ,
Կ զուռուշ հայի պատիւն այն. եւ նոքա եւս մեր
110 առաջնորդին պատիւ առնեն եւ ընթրիս: Մե-
րոցն մեր աչքիքն եփեն եւ նոցա՝ իւրեանց:
Այլ եւ Հոռոմք, Խպտիք, Ասորիք եւ Հայք սէր
ու միաբան են. աղջիկ տան եւ առնուն. այլ եւ
նոքա մեր պսակն, թագումն գան եւ հոգոյ
115 հացն. եւ մերն նոցա գնան. եւ այսպէս կային
միաբանութեամբ խաղաղ:

95 ուխտատեղք: — 110 ընդրիս: